

3551

Հայաստանի պարլամենտ

Տարի 3-ի արտահայտություն

Բիւրո

Զ.

1820.

9(47.925)

3-24

1991

ԴԻՆՆ Է 10 ռ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

Մ Ա Յ Ի Ս Ի 3-ի

ՔՐՏԵԿԱՐԳ ՆԻՍՏԸ

——————

1920 թ.

Տպարան «Ուրարտի»
Ե Ր Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի

ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

Նիստին ներքայ է կառավարութեան ամբողջ կողմը ունեցողներին մասն ու պատշաճը լինէ է իսկոն բազմութեամբ:

Նախագահում է Ա. ՍԱՀԱԿԵԱՆ. քարտուղարը կարգում է նոր սաացած գործերը:

ԱՐՏԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առաջին գործերի նախարար Հ. ՕՀԱՆՉԱՆԵԱՆ. — Պարտաւոր պատգամաւորներ, վերջին շաբաթայ ընթացքում Անդրկովկասի մէջ հարեան հանրապետութիւններում, յատկապէս Ադրբեջանում, կատարել են դէպքեր, որոնք առանձնապէս հետաքրքրական են և անմիջականօրէն վերաբերում են մեր կենսական շահերին. այդ դէպքերի նկարագրութիւնն է, որ պիտի անեմ այսօր:

Ինչպէս գիտէք, Հիւսիսային Արցախի գրաւումից յետոյ, բոլորէինք ոկսեցին զօրքեր կենտրոնացնել մասամբ Վասպուրի, բայց զիսաւորապէս Ադրբեջանի սահմանների վրա. Ադրբեջանը կարծես ուղղութիւն չէր դարձնում այդ երևոյթի վրա և իր ամբողջ ոյժերը՝ բազկացած 10,000 կանոնաւոր զօրքից և 10,000 կամաւորներէ, ուղարկել էր Ղարաբաղ, որոնք և զբաղւած էին կոտորելով հայ խաղաղ ազգաբնակչութիւնն ու

աւերելով քաղաքներն ու գիւղերը, առանց ուշադրութեան առնելու հետաքրքիր սահմանների վրա իրեն ոյժը:

Ապրիլի 27-ին ադրբեջանեան զինուորները նահանջում են Երասխայից և բոլորէինք, թւով 6000 զօրք գրաւում են Սաչմազը և դրա հարակից տեղերը: Ապրիլի 28-ին կատարում է յետաջրջումը. անդակաւ բոլորէինք կամակերպութեան ներկայացուցիչները վերջնապէս են ստիպ կառավարութեան իշխանութիւնը յանձնելու իրենց. պարլամենտն ընդունում է վերջնապէս և իշխանութիւնը յանձնում զինուորային զորքերի կազմակերպութիւնը:

Նախքան լիազորումը, Հայաստանի կառավարութիւնը դաշնակցութեան ներկայացուցիչներին պատգաւ հետեւալ յառադիրք.

Դաշնակիցների ներկայացուցիչների հետագիրը Հայաստանի կառավարութեան

Ադրբեջանեան կառավարութիւնը հարգում է դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին Անդրկովկասում որ բոլորէինք կողմից, ադրբեջանեան սահմանները խախտել են Բազում խռովութիւններ, կարող են ծագել Ադրբեջանեան կառավարութեան խնդրի համաձայն դաշնակից

պետութիւնների ներկայացուցիչներն առաջարկում են Հայաստանի կառավարութեան, որ նա անմիջապէս այնպիսի երաշխաւորութիւն տայ, որ ադրբեջանեան կառավարութիւնը կապ չի կր զօրքերը Ղարաբաղից և Հայաստանի սահմանակից այլ վայրերից տեղափոխել վատնելու սահմանները:

Գրաֆ դը Մառտիլ
Գեդապետ Գաբրա
Կոմիտաս Լիւկկ

Սորանից պարզ երևում է, թէ Ադրբեջանի նախկին վարչիները ինչպիսի փորձեր են արել արդարացնելու իրենց խռովութիւնը հիւսիսային սահմանների վրա: Կառավարութեան արդ յառադիրքն պատասխանեց տեւալ գրութեամբ.

Հայաստանի կառավարութեան պատասխանը դաշնակիցների հետագրին

«Փետրւարի 20-ից Հայաստանի կառավարութիւնը ձեր անւամբ իր միջոցը յուշագրերով ցոյց է տւել ադրբեջանեան կառավարութեան վարած ուղիքը՝ կոնֆերանսը պայթեցնելու վերաբերմամբ: Ադրբեջանը կանոնաւոր զօրքերի և խուժանի միջոցով նպատակ էր դրել նւաճել զինքի ոյժով Ղարաբաղը, հակառակ 1918 թ. օգոստոսի ամսուայ 22-ի համաձայնութեան:

Սրա հետ ազագայ անցքերի ամօղջ պատասխանատւութիւնն ընկում էր Ադրբեջանի կառավարութեան վրա: Հայաստանի կառավարութիւնը իշտ ձգտում էր հարեան հանրապետ

տութիւնների հետ խաղաղ կենակցութեան և յաճախ խնդրելով դիմել է Ադրբեջանի կառավարութեան և դաշնակիցների ներկայացուցիչներին առաջն առնելու Ղարաբաղի դէպքերի, որոնք կարող էին հայկական կոտորած առաջացնել Ադրբեջանի սահմաններում:

Ոչ մասնաւոր խաղաղասիրական դիմումները և ոչ դաշնակիցների կրկնակի նախազգուշացումները Ադրբեջանին, չկարողացան, տարաբախտաբար, առաջն առնել Ղարաբաղի արեւնալի դէպքերի և այդպիսով հեռու պահել Ադրբեջանի կառավարութիւնը այնպիսի գործողութիւններից, որոնք համաձայնեցւում էին տաճկական ագենտների ծրագրերին:

Ղարաբաղի վրա յարձակումը ծրագրւում և իրագործւում էր վաղուց. բազմաթիւ հայեր կոտորուեցին և հայ գիւղացիները, կազմակերպւած տեղական ոյժերով ստիպեցին զենքը (որ նրանք ունէին չնչին թւով) ձեռքն առնել, պաշտպանելու իրենց ֆիզիքական գոյութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը, չուզենալով հրդեհը և ժողովրդի կուր արեւնահեղութիւնը բորբոքել, բացարձակապէս ոչ մի մասնակցութիւն չի ունեցել, չնայած նրա այդ չմասնակցելը նրան հստակ բարոյական ահազին ճիգեր, և ոչ մի զինուոր Ղարաբաղ չէր ուղարկւում, այլ օգնութեան էր կանչւում կոնֆերանսին ու դաշնակիցներին:

Սյժոս էլ յայտարարւում է, որ նա Ղարաբաղում հայկական կանոնաւոր

93431-42



2004

1544-2002

1991

գործեր չունի: Կանգնած լինելով համաշխուրթեան ու վիճելի խնդիրները խաղաղ կերպով լուծելու սկզբունքի վրա և զինւած բոլոր ընդհարումները համարելով կոռուտաբեր Հայաստանի և նրա հարեան հանրապետութիւնների տնտեսական և քաղաքական շահերի համար, Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ նա ոչ մի ագրեսիւ գործողութիւններ Ադրբեջանի վերաբերեալ չի սկսելու, ինչ որ մի քանի անգամ հաստատել է Անդրկովկասեան հանրապետութիւնների և դաշնակիցների առաջ: Կառավարութիւնը յայտարար. է նաև, որ հայկական զօրամասերը չեն անցնելու Ադրբեջանի հետ որոշած կէտերը, յարձակում գործելու Ադրբեջանի վրա: Միաժամանակ, Հայաստանի կառավարութիւնը պահանջում է անհրաժեշտ երաշխիքներ Ղարաբաղի հայկական տարրի, ինչպէս և Ադրբեջանեան սահմաններում ապրող հայերի վերաբերեալ, որ չեն կրկնելու Ղարաբաղի, Նուխու, Շախխու, Զաքաթալայի և այլ գէպերը հայերի վերաբերմամբ, ուր տեղի են ունենում այդ գէպերը և այսօր էլ, ուր մնում են տաճիկ փաշաներն ու սպաները: Այդ երաշխիքների մշակումը ձեռք հետ յանձնարարւած է Թիֆլիսի մեր պատւիրակութեանը:

Զնայած մենք տիրեք երաշխաւորութիւն, որ Հայաստանի կողմից ոչ մի յարձակում Ադրբեջանի վրա չի կարող լինել, այնուամենայնիւ, Ադրբեջանն իր գործերը չափաւ Ղարաբաղից և չէր էլ կարող տանել, որովհետև ապրիլի 28 ին արդէն յայտարարւած էր խորհրդային իշխանութիւն:

Ապրիլի 30-ին, Ադրբեջանի խորհրդային իշխանութեան կամ զինւորային գործակալն կոմիտէի ներգաղթողներից մէկը՝ Համիդ Մուլթանով հաղորդում է իր մի քանի կամքի մէջ կարմիր զօրքը գրաւելով Եւրաշարժում է Շուշի, Ղարաբաղի վրայով միանալու Տաճկաստանին. միաժամանակ յայտնում է, որ Վրաստանն իրենց վախ չի ներշնչում, իսկ եթէ Հայաստանը դիմադրութիւն ցուցայ, հարկադրւած կլինեն պատերազմ յայտարարել:

Այս հետադիւրք, որի պատճէնն ունինք մեր ձեռքի տակ, պարզ ցոյց է տալիս Ադրբեջանում տեղի ունեցած դէպքերի իսկական ընդթը. կառավարութիւնը հարկ համարեց մի յայտարարով դիմել Ադրբեջանի նոր կառավարութեան ներկայացուցիչ Նարիմանովին ու միաժամանակ Մոզեմեան Ռուսաստանի արաբքի գործերի կոմիտէի Զիլիբիյին, պարզելով, եթէ ինչ է կատարւում իսկապէս Հայաստանի արտաքին գործերի նախարարի ղեկավարման Նարիմանովին (Ապրիլի 29 ին)

Բազու, Սովնարկոմի նախագահ Նարիման Նարիմանովին, պահէնք Հայաստանի ներկայացուցիչ Մ. Յարութիւնեանին

Երեւան, 29 ապրիլ
Ինչպէս Ձեզ յայտնի է, գիտեալ որ կովկասեան հանրապետութիւնների կազմակերպման սկզբից իսկ, զրբեջանի նախկին մուսուլմանական կառավարութիւնը քանիցս փորձեց զենքի գէնքի ոյժով իշխանական Ղարաբաղը և Չանգեղուրը հակառակ զիւղացիական պատգամաւորների 8 համագործակցների յայտարարած վճիռների: Նուն այդ կառավարութիւնը մարտ 22-ից սոյն տարւալ հրի ու օրի մատնեց Ղարաբաղի հայ աշխատաւոր զիւղացիութիւնը, այրելով զիւղերն ու քաղաքները, ոչնչացնելով խաղաղ ազգաբնակչութիւնը. չինայելով կանանց և երեխաներին: Այդ գործերը այժմ էլ Ղարաբաղում են և շարունակուում են իրենց գործողութիւնները, զէնքի ոյժով յիշած շրջանների աշխատաւոր զիւղացիութիւնը ենթարկելու Ադրբեջանի իշխանութեան:

Մեր կառավարութեան հասած մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, Հայաստանի սահմաններում արդէն գտնուող Ադրբեջանեան զօրքի կազմի լրացման նման շարժում են նոր պահեստի մասեր խորհրդային զօրքի անւան տակ: Հայաստանի կառավարութիւնը հաւատացած լինելով, որ Ադրբեջանի բանւորազիւղացիական կառավարութիւնը, որ յայտարարել է ժողովուրդների կամքի ազատ արտայայտման սկզբունքը, չի կարող ընթացիկ մուսուլաթ. կառավարութեան ուղիով, որ Ձեր ժողովրդի և Ձեր կողմից ճանաչւած է Ադրբեջանեան հանրապետութեան աշխատաւոր ժողովրդի շահերի դաւաճան, չի յապաղի շտապ զինքներ ձեռք առնելու Ղարաբաղում և Չանգեղուրում տեղի ունեցող կռիւների դադարեցման և յիշած շրջաններից ադրբեջանեան զօրքը յետ կանգնեցնելու համար: № 2686:

Արտաքին գործերի նախարար Զ. Օհանջանեան

Հայաստանի արտաքին գործերի նախարարի ղեկավարման Զիլիբիյին «Մարտի 32-ից սկսեալ Ադրբեջանի մուսուլաթիստական կառավարութեան գործերը, ինչպէս այդ մասին հաղորդւած էր նաև սովետական հեռագրեւում, յարձակում գործեցին Ղարաբաղի աշխատաւոր զիւղացիութեան վրա, զէնքի ուժով հպատակեցնելու իրենց իշխանութեան, հակառակ այդ գիւղացիութեան պարզ արտայայտած կամքի: Տեղի ունեցաւ մասսայական ոչնչացում Ղարաբաղի զիւղերի և հայ ազգաբնակչութեան: Ներկայումս Ադրբեջանում յայտարարւած է սովետական իշխանութիւն, բայց, այնուամենայնիւ, այդ գործերը յետ չեն կանչւած: Միևնոյն ժամանակ, մեզ մօտ տեղեկութիւններ են ստացւած, որ ինչ որ գործեր, որոնք իրենց անւանում են կարմիր, շարժում են Ղարաբաղի և Չանգեղուրի վրա և իբրեք մտադիր են Հայաստանի կենդանի մարմնի վրայով գնալ, միանալու համար տաճկական Անատոլիայի հետ ուղղակի: Ղարաբաղ — Չանգեղուրի և Նախիջևանի վրայով, չնայելով այդ ճանապարհը հնարաւորութիւն չի ներկայացնում զօրքի այդ տեսակ առաջնադացութեան համար և ի նկատի առնելով այն, որ սովետական կառավարութիւնն արդէն վաղուց ճանաչել է Հայաստանի անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը Սովնարկոմի նախագահ Լենինի առանձին զեկրետով և խորհուրդների համառուական երրորդ համագումարի որոշմամբ, կարմիր զօրքերի այդ առաջնադացումը, եթէ այդ ճիշտ է, միապատշաճ է:

անգամայն անհասկանալի է: Իմ կառավարութեան անունից խնդրում եմ չմերժել հաղորդելու, իսկապէս այդ ուստական սովետական զօրքեր են, և որոնք են նրանց նպատակները:

Յայտագրերի հետեւներ մասին զեռ անդեկութիւն չառած, մայիսի 1-ին, առաւօտ, ժամը 7 և կիսին Ադրբեջանի նոր կառավարութեան կողմից ստացանք մի վերջնագիր հետեւեալ բովանդակութեամբ.

Ադրբեջանի նոր կառավարութեան վերջնագիրը Հայաստանին

«Ադրբեջանեան Խորհրդային Հանրապետութեան բանւորագիւղացիական կառավարութիւնը յանձինս յիշափոխական կօմիտէի, պահանջում է. նախ՝ մաքրել ձեր զօրքերից Ղարաբաղի և Զանգեզուրի տերրիտորիան, երկրորդ՝ քաշել գէղի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջեան կոտորածը: Հաւանակ գէղըւմ, Ադրբեջանեան սօցիալիստական խորհրդային հանրապետութեան յիշափոխական կօմիտէն իրեն կհամարի պատերազմական դրութեան մէջ Հայաստանի հանրապետութեան հետ:

Վերջնագրի պատասխանի համար տրուում է 3 օր ժամանակ:

Ադրբեջանի Խորհրդային հանրապետութեան ներքին գործերի կօմիտար՝ Հոսեյնով

Մի քանի ժամ յետոյ ստացանք մի այլ վերջնագիր, կովկասեան հատի սովետական զինւորա-յիշափոխական Խորհրդի նախագահ Օրթօնիկիձէի և այլոց ստորագրութեամբ:

Օրթօնիկիձէի յայտագիրը

«Հայաստանի և մեր բարեկամ գաշնակից խորհրդային Ադրբեջանի սահմաններում շարունակուում են պատերազմական գործողութիւնները Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ռուսաստանի բանւորական զիւղացիական կառավարութիւնն իր սրբազան պարագն է համարում իր ամբողջ ուժերով օգնութեան հարնել Ադրբեջանի բոլոր աշխատաւորների անունից իրեն զիմոց Ադրբեջանեան բանւորական զիւղացիական կառավարութեանը, հաստատելու այնպիսի բանւորական զիւղացիական իշխանութիւն:

Ազգային ատելութեան հոգի վրա առաջ եկած պատերազմը Հայաստանի և Ադրբեջանի զօրքերի միջև, որն աւելի է բռնկուում Անդլիայի և Եւրոպայի սօցիալիստական խորհրդային ազիտացիայով, ձեռնառու է միայն ճնշած ժողովուրդներին յաղթողներին ու Ադրբեջանի և Հայաստանի աշխատաւորութիւնը կեղեքողներին:

Սահմանային բոլոր վիճելի խնդիրները Հայաստանի և Ադրբեջանի մի կարող են լուծել միայն ինքնորոշ և աշխատաւոր ազգաբնակչության կամքով:

Սովետական Ադրբեջանը չի կարող թոյլ տալ և ոչ մի շօվիւիստական ազգայնական և ազգասիր գործողութիւն: Միջցիղային ատելութիւնը սովետական Ադրբեջանում այլևս չի կարող տեղի ունենալ:

Ռուսաստանի սօցիալիստական ֆեդերատիւ խորհրդային հանրապետութեան անունից առաջադրուում եմ Հայաստանի կառավարութեան՝ անմիջապէս դադարեցնել պատերազմական ամեն գործողութիւնները սովետական Ադրբեջանում և դուրս բերել իր զօրքերը նրա սահմաններից: Այդ պէտք է կատարի 34 ժամայ ընթացքում այս առաջարկութիւնն ընդունելուց յետոյ:

Այս առաջարկութեան չիրականացումը կընդունւի սօցիալիստական ֆեդերատիւ սովետական հանրապետութեան կողմից իբրեւ պատճառ պատերազմական գործողութիւնների:

Այս առաջարկութիւնը կիրականանայ առևտրական կարմիր բանակի կողմից, իսկ ամբողջ պատասխանատվութիւնն այս բանում կընկնի Հայաստանի կառավարութեան վրա:

Կովկասեան ճակատի յիշափոխական բանակի խորհուրդ՝ Օրթօնիկիձէ, առաջին բանակի յիշափոխական զինւորական խորհուրդ՝ Կիրով, Մեխաճօրին, Լեւանդովսկի: 1 մայիսի, 1920 թ.:

Թէպէտ, միջազգային օրէնքներով նման վերջնագրերը կարելի էր համարել չընդունւած, այնուամենայնիւ, Հայաստանի կառավարութիւնը պատասխանեց երկուսին էլ, որպէսզի ոչ մի կասկած չմնայ, թէ

մենք որեւէ միտք ունենք անհամաձայնութիւն կամ բաղիւսմաներ առաջ բերել Հայաստանի և Ռուսաստանի, կամ Հայաստանի ու Ադրբեջանի միջև:

Հայաստանի արտաքին գործերի նախարարի պատասխանը

Բագու, Ադրբեջանի խորհրդային հանրապետութեան արաքին գործերի կօմիտարի պաշտօնակատար Հոսեյնովին, պատճէնը Հայաստանի ներկայացուցիչ Մ. Յարութիւնեանին, Մօսկւա—Լենինին, Չիչերինին և Կովկասեան ճակատի զինւորա-յիշափոխական խորհրդի նախագահ Օրթօնիկիձէին:

Երեւան, 4 մայիսի

Ի պատասխան ապրիլ 30-ի Ձեր վերջնագրի, որ մենք ստացել ենք մայիս 1-ին, Հայաստանի կառավարութեան անունից հաղորդում եմ հետեւեալը.

Առաջին կէտի առթիւ՝ Ադրբեջանի տերրիտորիայի վրա հայկական զօրք չկար և չկայ: Ընդհանրապէս, Ձեր իսկ ձեռքով տապալւած մուսուլմանական կառավարութեան զօրքերն աւելան կառավարութեան զօրքերն մինչև այժմ շարունակում են մնալ Հայկական Ղարաբաղի շրջաններում, կոտորելով հայ զիւղացիութեան և այրելով Շուշի քաղաքի հայկական մասն ու բազմաթիւ գիւղեր: Լիովին համաձայնելով Կովկասեան ճակատի զինւորա-յիշափոխական խորհրդի նախագահ Օրթօնիկիձէի Ձեր կողմից Ռուսաստանի խորհրդային իշխանու-

թեան արած դիմումի հետեանքով մեզ ազդարհած վերջնադրի մէջ արտայայտածի հետ, մենք նոյն այդ հարցի մասին յայտարարում ենք, որ Ադրբէյջանի Հայաստանի միջև եղած սահմանային վեճերը պիտի լուծեն աշխատութեան կամքի համաձայն, և որ Ղարաբաղի գիւղացիութիւնն իր անխախտ կամքն ու թ համագումարներում արտայայտել է—լինել, Հայաստանի հանրապետութեան կազմի մէջ, ինչ վերաբերում է Չանգեղուրին, պիտի յայտնեն, որ Ադրբէյջանը երբեք իր իշխանութիւնը այդ հողամասի վրա չի տարածել և այդ պատճառով ոչ մի թէ իրաւական և թէ փաստական հիմունք չկայ Չանգեղուրը համարել Ադրբէյջանի հողամաս. Չանգեղուրը համաձայն իր գիւղացիութեան կամքի կառավարում էր և այժմ էլ կառավարում է իր Սորհրդով և իրեն համարում է Հայաստանի հանրապետութեան անբաժան մասը:

Սրկրորդ կէտի առթիւ՝ Հայաստանի զօրքերը համաձայն կառավարութեան բազմիցս յայտարարութիւնների՝ երբեք չեն անցել դրացի հանրապետութիւնների, ինչպէս նաև Ադրբէյջանի սահմանները:

Երբորդ կէտի առթիւ՝ Հայաստանի սահմաններում ազգամիջեան կոտորած չկայ, իսկ անցեալի ընդհարումներն առաջացել էին մուսուաթական կառավարութեան և տաճկական էմիրտարների ձեռքով կազմակերպած մանկազան ազգաբնակչութեան ապստամբութեամբ՝ հայկական հողամասերի վրա, Հայաստանի հանրապետութեան դէմ, որի կառավարութիւնը պարտական էր ձեռք առնել նախադրուական միջոցներէ հանդէպ: Ընդհակառակը, Ղարաբաղի դէպքերի առթիւ Ադրբէյջանի ամբողջ տերրիտորիայի վրա հայերի մասսայական կոտորած էր տեղի ունենում և այլևս են հայկական տաճկանի գիւղեր:

Վրճելի բոլոր հարցերի խաղաղ լուծման տեսակէտի վրա կանգնած լինելով և որևէ սազմական գործողութեան դէմ լինելով, Հայաստանի կառավարութիւնը Սորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների վերոյիշեալ կարծիքին համաձայն է, և նոր ընդհարումների ծագման հնարաւորութիւնները վերացնելու համար, առաջարկում է Ձեր կառավարութեան առաջին՝ զազարեցնել բոլոր սազմական գործողութիւնները, երկրորդ՝ սահմանների վերջնական որոշման ու դրացի հանրապետութիւնների միջև նորմալ յարաբերութիւններ ստեղծելու համար Հայաստանի կառավարութեան հետ բանակցութիւններ սկսել:

Հայաստանի հանրապետութեան արտաքին գործերի նախարար՝
Հ. Օհանջանեան
Հայաստանի արտաքին գործերի նախարարի պատասխանը Օրթոնիկիճեի վերջնադրին
«Գիտի հաղորդեմ, որ հայկական զօրքեր Ադրբէյջանի տերրիտորիայի վրա չեն եղել և չկան ներկայումս: Ընդհակառակը, Ադրբէյջանի բեկական մուսուաթիստական կառավարութեան

զօրքերը գտնուում են իրենց համար վրճելի համարած Հայկական Ղարաբաղի հողում, և վերջերս, նոյնիսկ հայ ժողովրդին կոտորածի մասնեցին և այրեցին բազմաթիւ գիւղեր և քաղաքներ: Ղարաբաղի ազգաբնակչութիւնը բազմիցս գիւղացիական պատգամաւորների համագումարներում արտայայտել է իր անխախտ կամքը՝ չմտնել Ադրբէյջանի պետութեան մէջ, մինչդեռ Ադրբէյջանի զօրքերը գտնուում են այդ շրջանում յատուկ նրա համար, որպէսզի կոտորեն ինքնուրուշ ժողովրդի այդ կամքը: Որովհետև բոլորովին հայկական զօրքեր չունենք Ադրբէյջանի հողերում, Հայաստանի կառավարութիւնը խնդրում է ձեզ առաջարկել Ադրբէյջանի նոր կառավարութեան՝ դուրս հանել լեռնային Ղարաբաղի սահմաններից իր զօրքերը, կատարել արդէն տաճկերորդ անգամ այդ շրջանի ժողովրդի մէջ անկետ և վարել ժողովրդի կամքի համաձայն:

Ռուսաստանի Սովետական իշխանութեան յայտարարութիւնը, որպէս հայտարար միջնորդի վրճելի հարցերը լուծելու համար, ողջունելի կը լինի, ի հարկէ, Ղարաբաղի բազմաչարչար և արիւնով ողողւած հայ գիւղացիութեան համար:

Հայաստանի կառավարութիւնն առաջարկում է Սովետական և սօցիալիստական Ռուսաստանի ներկայացուցիչներին ուղարկել Ղարաբաղ չէզոք մի յանձնաժողով՝ պարզելու համար իսկական դրութիւնը:

Ի նկատի առնելով վերոյիշեալը, իմ կառավարութիւնը կարեւոր է համարում յայտնել, որ ներկայ դէպքում

ոչ մի հիմք չկայ ուղիմատիւ յայտարարել, և միանգամայն հաւատացած լինելով, որ Սովետական Ռուսաստանի բանւոր-գիւղացիական կառավարութիւնը, որն արդէն վաղուց ճանաչել է Հայաստանի անկախութիւնն ու ինքնորոշութիւնը լեռնի գեկրետով և Համառուսական Սորհուրդների երրորդ համագումարով, թոյլ չի տայ նոր բնութիւն գործադրելու հայ աշխատաւոր գիւղացիութեան վրա, որ երկար տարիներ անա արիւն է թափում:

Երևան, 2 մայիսի
1920 թ.

Այս պատասխաններից դուրս տեսնում էք, որ Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը տոգորւած է գերազանց խաղաղասիրու. թեմբ և նրա բուն ցանկութիւնն է բոլոր վեճերը լուծել փոխադարձ համաձայնութեամբ. միաժամանակ, կանգնած լինելով ժողովուրդների ինքնորոշման բարձր սկզբունքի վրա, կառավարութիւնը պարտք է համարում յայտնել, որ նա հայ բովանդակ ժողովրդի վճռական կամքի համաձայն, պատրաստ է ամեն գնով պաշտպանելու Հայաստանի սահմաններն ու անկախութիւնը՝ ուս կողմից էլ որ վտանգ սպառնայ նրան (ազմկալից ծափեր):

Պարլամենտը միաձայնութեամբ որոշում է քննել արաբերէն գործերի նախարարի ղեկուցումը: Զայն է խնդրում դաշնակցական պատգամաւոր Ս. ԹՈՐՈՍՍԵԱՆԸ:

Հայաստանի ժողովրդի ներկայացուցիչներ,

Սոյն թւի ապրիլի 28-ին Կովկասի կեանքում բացւեց մի հետաքրքիր էջ, սկսւեց պատմութեան մի նոր շրջան: Աղբրէջանը, որ աղնւական բէկական մի երկիր է, որ առհեպան օրիննապայի ցայառն արայայաւիչն է, դարձել է կոմսուկիստ:

Ռուսական կոմսուկիզմը պատշտ է զարգացած արդիւնաբերութեան, նա բանւորութեան և դիւղացիութեան տիրապետութիւնն է Ռուսաստանում: Աղբրէջանը չսանի տմենիին այլ նա խաղաղամենները, նա դեռ չէ ազատագրուել բէկական-խանական տիրապետութիւնից, բայց յայտարարել է իրեն կոմսուկիստ. սակայն, պատմութեան մէջ խոշոր թորչքներ չեն կարող տեղի ունենալ, եթէ էւրոպացիան հող չէ պատրաստել. այդպիսի երեւոյթները պատմութեան մէջ միայն արեւածի բնոյթ ունին և Աղբրէջանը դիմեց արկածախնդրութեան:

Իւրաքանչիւր մարդ, որ ծանօթ է հասարակական կեանքի պատմութեան, պէտք է լու գիտենայ, որ Աղբրէջանում կատարւում է մի կեղծիք, և այսօր Հայաստանի պարլամենտի պարտքը պիտի լինի պատուել դիմակըն ու մերկացնել այդ կեղծիքը:

Պատգամաւորներ, իր կոմսուկիստական կեանքի երեք օրը դեռ չադրած, Աղբրէջանն անում է առաջին քայլը. պէտք էր սպասել, որ նա հանդէս կգայ նոր նշանաբաններով, որ նա բոլոր միջոցներով կձգտի վերջ տալու արիւնհեղութիւններին, սակայն, դրանց փոխարէն, վերջնա-

գիր է ուղարկում Հայաստանին և կամենում է Ղարաբաղի ու Զանգեզուրի ըմբոստ ժողովրդին իր ձեռքը ձգել, խանական տիրապետութեան մէջ նրան ևս կեղեքելու, ճնշելու: Այս փաստն ինքնին մի փառաւոր ապացոյց է, որ Աղբրէջանի նոր կառավարութիւնը երբեք կօմսուկիստական չէ, նա հին կառավարութեան հարազատ զաւակն է ու նրա նպատակների մասի հետապնդողը:

Աղբրէջանի վերջնագրին մենք ունինք միայն մէկ պատասխան— Ղարաբաղը և Զանգեզուրը, ունենալով հոծ հայութիւն, պէտք է միանան Հայաստանին (աղմկալից և երկարատեւ ծափահարութիւն):

Հայաստանի կառավարութիւնը պէտք է ձեռք առնի բոլոր միջոցները, պահպանելու Հայաստանի անբաժան մասը կազմող Ղարաբաղն ու Զանգեզուրը (բուռն ծափեր):

Մենք ստացել ենք նաև երկրորդ վերջնագիրը, այս անգամ արդէն Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից:

Նախ, կարևոր եմ համարում մտանշել, որ Հայաստանի վիճակը սովետական կենտրոններում չէ պարզաբանւած ճշտօրէն և իմ խորին համոզմամբ այս վերջնագիրը արդիւնք է Աղբրէջանի կեղծ ինֆօրմացիայի. ումենից առաջ կառավարութեան պարտքն է կանոնաւորել ինֆօրմացիան:

Միւս կողմից, մենք չենք կարող անտեսել, որ հայ ժողովուրդը կուտուրական կապերով կապւած է Ռուսաստանի հետ. այդ այդպէս լինելով հանդերձ, չենք կարող նոյնպէս չլիշել, որ Ռուսաստանից ընդունած կուտ-

տուրայի վրա հայ ժողովուրդը միշտ դրել է իր հանձարի, իր ստեղծագործութեան ուրոյն դրոշմը, որ ապացոյց է նրա կենսունակութեան ու սեփական կորովի:

Յարգելով կուտուրական կապը, մենք պարզ և որոշ պէտք է յայտարարենք Սովետական Ռուսաստանին, որ հայ ժողովուրդն ազատալիտի լինի, որ նրա ինքնորոշելու իրաւունքն անվիճելի է հէնց իր հաշկաւոր նշանաբանի համաձայն: Ես համոզւած եմ, Սովետական Ռուսաստանն այդ իրաւունքը խախտել չի կարող. կօմսուկիստների Մօսկւայի համագումարն ի լուր աշխարհի յայտարարել է, որ սովետական իշխանութիւնը պէտք է ազատագրէ բոլոր ճնշւածներին ու նրանց ազատ զարգացման հնարաւորութիւն պիտի առայ: Յասկապէս հայ դատի նկատմամբ այդ նոյն սովետական իշխանութիւնը թէ յառաւիգն կը կրեւորվ և թէ խորհուրդների երբորդ համագումարում որոշակի դրական վերաբերմունք ունի ցուցադրած. նա թէ այն դեկրետով ու թէ համագումարի որոշմամբ ճանաչել և ընդունել է անկախ Հայաստանի զոյութիւնը: Հայ ժողովրդի համար այժմ հասել է ժամը ազատութեան և սովետական իշխանութիւնը պէտք է կատարէ իր խօսքը՝ ճանաչելով ու ամրապնդելով մեր ազատութիւնը:

Մենք կարող ենք բանակցութիւն սկսել Ռուսաստանի հետ, ամուր և անսաստան կանգնած Հայաստանի անկախութեան տեսակետի վրա (բուռն ծափեր): Եթէ կառավարութիւնն ընթանայ այս ուղիով, ժողո-

վուրդն ու զօրքը նրան դօրալիգ կլինեն (երկարատեւ ծափահարութիւն):

Եանդաժառ ծափերի տակ ամբիոն է բարձրանում պատգամաւոր ՍԵՊՈՒՆԸ:

Վերջին դէպքերն ինձ համար շատ տաքօրինակ են. ապրիլի 28-ին Աղբրէջանն առաջադուծ է Հայաստանին յետ քաշել զօրքերը Ղարաբաղից, իր ոյժերը բօլշեիկների դէմ տանելու համար, և չորս ժամ յետոյ յայտարարում խորհրդային իշխանութիւն: Այս դէպքերը շատ նման են 1908 թ. դէպքերին, երբ Տաճկաստանը յայտարարեց սահմանադրական երկիր. այն, յայտարարեց, բայց և անմիջապէս կաղժակեղեց Աղանայի չտեսնւած ջարդը:

Այսօր Աղբրէջանը դարձել է սովետական և երկու օր չանցած սպառնում է մեզ. ինչու, որպէսզի երբորդ Հայաստանի վրայով միացնէ Տաճկաստանի «կարմիր» զօրքերին, այն Տաճկաստանի, ուր չկայ, չի եղել և չի կարող լինել «կարմիր» զօրք, այլ կայ միայն կարմիր սուլթան (բուռն ծափեր):

Այդպիսի սպառնալիքներ հայ ժողովուրդը շատ է տեսել. ևս պահանջում եմ կառավարութիւնից, ոչ մի ուղղորութիւն չդարձնել, զբաղ խաղեր են, սարքւած աղբրէջանեան կարմիր դահիճների ձեռքով, հայ ժողովրդին բնաջնջելու նպատակով: Սակայն նոքա չեն հասնի իրենց նպատակին, քանի կանգուն է մեր քաջարի բանակը:

Իմ զօրամասն, այսօր ուղարկած հաւաքում, խոստանում է կուել մինչև

վերջին մարզը և մի թիզ հող չէի-
ջիլ թշնամուն (խանդավա՞ծ Ժափեր)։
Ես յայտարարում եմ ձեզ, որ այդ
ազով տոգորում է մեր ամբողջ բա-
նակը, յենած նրա վրա, կառավա-
րութիւնն աներեր հաւատով պէտք է
տուաջ տանի մեր հայրենիքի պաշու-
պանութեան գործը (բուռն ծափեր)։

Երկրորդ վերջնագիրն ստացւած է
սովետական Ռուսաստանի ներկայա-
ցուցիչների կողմից. մենք միշտ կա-
րող ենք խօսել նրանց հետ, որով-
հետև առևտրական յեղափոխական բա-
նակն ու յեղափոխական իշխանու-
թիւնը մեզ համար բոլորովին այլ
արժէք և այլ նշանակութիւն ունին։
Սակայն, այս դէպքում ես, կառավա-
րութիւնը չպիտի մոռանայ, որ ամեն
բանակցութեան, ամեն համաձայնու-
թեան նախապայման է Հայաստանի
անկախութիւնը։ Ես իբրև զինուորա-
կան, ինչ հետ նաև հայ բանակը,
կոչւած ենք պաշտպանելու հայ հայ-
րենիքի անկախութիւնը բոլոր վտանգ-
ների դէմ. դա է մեր գերազանց
պարտքը և թող կառավարութիւնը
երբէք չմոռանայ, որ հայ բանակը
գիտէ կատարել իր պարտքը սրբու-
թեամբ (երկարատև ծափահարու-
թիւն)։

Լ. ԹՈՒՄԱՆԵԱՆ (սօցիալ. յե-
ղափոխական)։— Բազում կատարւած
գեղձիք համարելու հիմք չունենք.
կատարել է յեղաշրջում, մուսաւաթա-
կան ոճրագործ ղեկավարները հեռա-
ցիւ են ասպարիզից և իշխանութիւնն
անցել է զինուորա-յեղափոխական կո-
միտէի ձեռքը։ Գուցէ հին կառավա-
րութիւնը յոյսեր ունի ազդելու նոր

վարիչների վրա, բայց այդ տեղի
ո. նենալ չի կարող, որովհետև Անդր-
կովկաս է իջնում առև յեղափոխա-
կան բանակը։

Ա. ՇԻՐԻՆԵԱՆ (դաշ.)։— Ճիշտ չէ,
ասացէք Դադստանի մուսուլման բա-
նակը (ծափեր)։

Լ. ԹՈՒՄԱՆԵԱՆ. — Ռուս բանակը,
որ չի հեռանայ Ադրբէյջանից։ Այսօր
հերթը հասել է նաև իմպերիալիստ-
ներին ծափահարող Հայաստանի «Մու-
սաւաթին»՝ «Դաշնակցութեան», այժմ
նա պէտք է հեռանայ ասպարիզից։

Գ. ԲԱՆԱՅԵԱՆ (դաշ.)։— Գոնէ լռե-
ցէք, ամբ է՞ ձեզ։

Լ. ԹՈՒՄԱՆԵԱՆ. — Այո, պէտք է
հեռանայ նաև հայկական «Մուսաւա-
թը», եթէ նա չի ցանկանում, որ
բռնի ոյժով հեռացնեն նրան (ծիծաղ
դաշնակցական ֆրակցիայի կող-
մից)։

Ա. ՅԱՎԱՆՆԻՍԵԱՆ (դաշ.)։— Ահա
երկու տարի է, մուսաւաթական կա-
ռավարութեան ձեռքով արնաքամ է
լինում հայ ժողովուրդը. դուք, պա-
րոնայք էսէրներ, հերքեցէք, որ հա-
րիւրաւոր հայ տղաներ թլպատւած՝
չեն գանուում Դաշնա գիւղում, հերքե-
ցէք, որ ծալէթ, Վարդաշէն և ուրիշ
շատ գիւղեր սրի չեն քաշւած, հեր-
քեցէք, որ բազմաթիւ հայ կանայք
ու աղջիկներ գերածու բռնաբարւած
չեն, որ աւերւած չէ Շուշու հայ-
կական մասը, որ չէ սրածուում Դա-
րաբաղի անմեղ ժողովուրդը։

Գառգ. Լ. ԹԱՄԱՆԵԱՆը ողջունում
է այժմ Ադրբէյջանի խորհրդային, ես
կասեմ խորհրդաւոր իշխանութիւնը.
ձեզանից առանջ կարող էինք ողջու-

նել, պ. ԹԱՄԱՆԵԱՆ, բայց մեր է
արաւայտակց նրանց կամքը— հրա-
նրա հրովարտակը, որ ազատէ մեր
դերիներին ու բռնաբարւած կանանց
և աղջիկներին. մեր է նրանց կոչը
համերաշխութեան. Աւսուրբէկովի
տեղ Նարիմանովին նստեցնելով
փխկեց էութիւնը։

Դուք երեսով էք աւլիս, որ մենք
ծափահարել ենք իմպերիալիստներին,
բայց մեծ էիք ծափահարում դուք.
մոռացիւ էք Միրբախին (ծափեր),
մոռացիւ էք, որ քանդում էիք Գեա-
րգրաղի ջրմուղները (բուռն ծափեր),
դուք չէիք, որ սկսեցիք քաղաքա-
ցիական կռիւր Ռուսաստանում և
բօլշևիկների յաղթական արշաւից
ընկճւած՝ դարձաք թուլամորթ, ան-
կամ ու անճար։ Այսօր ձեր կաշին
փրկելու համար խուճկ էք ծխում սո-
վետական Ռուսաստանին, սակայն,
մեր է ձեր հերոսը՝ փառապան Վե-
րենսկին— Փարիզում դուք է լարում
Խորհրդային իշխանութեան դէմ (աղմու-
կալից ծափեր)։

Ողջունում էք այժմ Հիւսէյնովին,
այն մարդուն, որ յայտարարում է, թէ
կարմիր բանակը արշաւում է հայ
ժողովրդի վրա. գոնէ ամաչէք ժող-
վուրդ բառը դորձածելուց։

Կարծում էք միամտաբար, թէ
Ադրբէյջանում իրօք յեղաշրջում կա-
տարեց, «Մուսաւաթ»ն այնքան ան-
զօր էր, որ այդպէս հեշտութեամբ
գիշեց իշխանութիւնը. ասացէք խնդ-
րեմ, միտե՛ղ է տեսնւած այդպիսի
բան. ես պնդում եմ, որ, այո, այդ
կառավարութիւնն աւելի վատթար է,
քան նախկինը։ Չմոռանաք «Իթթի-
հատի» համագումարը, ուր պարզօրէն

արաւայտակց նրանց կամքը— հրա-
նրա հրովարտակը, որ ազատէ մեր
դերիներին ու բռնաբարւած կանանց
և աղջիկներին։

Եւ դուք, թուլամորթ կուսակցու-
թիւն, որ Ռուսաստանում դիւղա-
ցիւթեան 80 տոկոսն ունէիք ձեր
յետից, չկարողացաք կառավարու-
թիւն ստեղծել, այսօր յանդգնութիւն
ունիք ասելու, թէ հասել է ժամը, որ
Դաշնակցութիւնը հեռանայ իշխա-
նութիւնից. ձեր մտքով երբէք չանց-
կացե՛ք, որ կարող էք մի օր երկրի
ղեկը ձեր ձեռքը վերցնել (բուռն
ծափեր)։

Արաւաքին գործոց նախարարի
մեղմ տոնը թող ձեզ չմոլորեցնի. այդ
մեղմ տոնի յետևում կանգնած է հայ
աշխատաւորութիւնն ու Դաշնակցու-
թիւնը։

Պարոնայք էսէրներ, ի վերջոյ հաս-
կացէ՛ք, դուք չէք, որ պիտի մեղ
կապէք Ռուսաստանի հետ. մենք ող-
ջունում ենք Սովետական Ռուսաս-
տանը, եթէ նա ձանաջում է մեր
անկախութիւնն ու ազատութիւնը
(ծափեր)։

Կառավարութեան համար թող
պարզ լինի, որ ոչ մի գնով, ոչ մի
պարագայում իշխանութեան թուլա-
ցում տեղի չպիտի ունենայ. դուք,
պարոնայք նախարարներ, ձեր խել-
քով, ձեր ամբողջ ուժով, հայ աշխա-
տաւորութեան ու պարլամենտի հետ
միասին, պիտի ծնէ՛ք բոլոր դռները,
պիտի սպառէք բոլոր միջոցները,
փրկելու հայ ժողովրդի զոյոթիւնն
ու նրա հայրենիքի անկախութիւնը.
հայ աշխատաւորութեան վճռական և
միահամուռ կամքն է՝ լինել ազատ

ու աղբիլ Միացեալ և Անկախ Հա-
յաստանում: (Երկարատե, որոտըն-
դոստ ծափահարութիւն, որ կրկնուում
է մի բանի անգամ):

Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ (սօց. յեղ.)—
Հին Ռուսաստանում կար մի թերթ
«Новое Время» անունով, որ հայտո-
յում էր ամեն մի հեռացող իշխանու-
թեան և ողջունում նոր եկողին. այ-
ժըմ Դաշնակցութիւնն է կատարում
նոյն գերը Ռուսաստանի նկատմամբ:

Մենք էլ ենք ըննադատում Աղբը-
բէջանի նոր կառավարութիւնը, բայց
ըննադատելով հանդերձ պիտի խոս-
տովանենք, որ նա աւելի տանելի է,
քան հինը:

Վ. ՆԱԻԱՍԱՐԵԱՆ (գաշ.)—Ինչով
է տանելի:

Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ (սօց. յեղ.)—
Տանելի է հէնց նրանով, որ սա չունի
ցցւած ժանիքներ...

Վ. ՆԱԻԱՍԱՐԵԱՆ (գաշնակց.)—
Ունի, բայց թաղւած:

Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ (սօց. յեղ.)—
Թէ նորն թնչ ունի, դեռ չգիտենք.
այնուամենայնիւ, լաւ է ունենալ թաղ-
ւած ժանիքներ, քան ցցւած (ծիծաղ
գաշնակցականների կողմից): Պարզ է,
որ Սօվետական Ռուսաստանը աղբիլ
է և պէտք է աղբի այդ կառավա-
րութեան վրա: Ի՞նչ պիտի լինի
մեր գիրքը. լաւ բան է, որ սարգ իր
գլխի տէրն է և ունի ուժ իր գլխի
տէրը լինելու, բայց մենք ունինք
այդ հնարաւորութիւնը. չպէտք է
ընկնել ֆետիշների յետեից, չպէտք է
մի իգէալ գնել և նրա համար կոխ-
յայտարարել ամբողջ աշխարհին: Թնչ
անել ապա—համակերպւելու ահա իմ

պատասխանը. համակերպւել, եթէ ի-
րօք գալիս է խորհրդային իշխանու-
թիւնը:

Վ. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ (գաշ.)— Գալիս է
Թիւրքիան և ոչ Ռուսաստանը, մի խե-
ղաթիւրէք փաստերը:

Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ (սօց. յեղ.)—
Բայց համակերպել չի նշանակում ի
հարկէ տալ ամեն ինչ, մենք պէտք է
աշխատենք ձեռք բերել մաքսիմուժը,
իսկ եթէ չյաջողուց, պատրաստ պիտի
լինինք զիջումների, մինչև մեր ան-
կախութիւնից հրաժարուժը:

Հայ ժողովրդի ֆիզիքական գոյու-
թիւնը ելակէտ ունենալով, մեզ մնում
է մի բան—Հայաստանում յայտարա-
րել խորհրդային իշխանութիւն (բուռն
ծիծաղ գաշնակցականների կողմից):

Հաղորդակցութեան նախարար՝

Ա. ՋԱՄԱԼԵԱՆ (գաշ.)— Պատգ. Խոնդ-
կարեանն ասաց, թէ Ռուսաստանում
մի թերթ կար, որի գերն էր գովել
ամեն իշխանութիւն. ես էլ ասում
եմ, Հայաստանում կայ մի կուսակ-
ցութիւն, որի գերն է գովել ամեն
իշխանութիւն, որ գալիս է
հիւսիսից:

Յայտնի է արգէն, թէ էսէքները
ինչ յոյսեր էին կապում Բիշերախովի
և Դանիկիւնի հետ. այսօր յայտնի
գարձաւ մի ուրիշ բան ևս, այն, որ
սօցիալիստ. լիզափոխականների կու-
սակցութիւնը, խորհրդային իշխա-
նութեան գլխին հազար տեսակ լու-
տանքներ թափելուց յետոյ, սկսել է
նոյն այդ իշխանութեան երկրպա-
ղել:

Նրա գլխաւոր պատճառն այն հո-
գեթանութիւնն է, թէ Հայաստանն

անպայման պիտի կապւի Ռուսաս-
տանի հետ, թէկուզ ստանան նստած
լինի այնտեղ: Ռուսաստանն
այսօր մեզ հետ կապում է
Աղբբէջանի վրայով, ուստի և ամե-
նից առաջ Աղբբէջանի կառավարու-
թիւնն է, որ ըննադատութեան է են-
թարկւում մեր կողմից:

Աղբբէջանեան յիշողաշըջման՝ մասին
պատգ. Խոնդկարեանն ասաց թէ՛ ի-
րօք Ֆարս է կատարւում. այո, Ֆարս
է կատարւում և պարոնայք էսէքները
լաւ պիտի գիտենան, որ Ֆարսն ա-
ւելի վաճառւոր է և էլ աւելի վաճա-
ռւոր է ժողովը, քան ցցւած ժանիքը.
փաստն էկաւ հաստատելու մեր ա-
սածը:

Այդ կուսակցութիւնը, որին նշանաբան-
ներից մէկն է աղբերի ինքնորոշումը,
ամեն անգամ օտանհարում է իր
սկզբունքը, երբ խնդիրը վերաբերում
է Հայաստանին:

Փիլիսոփայական դատողութիւն են
տալիս մեր ժողովուրդի անկաշկանդ
դարգացման մասին, առանց մտածե-
լու, որ անկախութիւնն էլ այդ նպա-
տակի հիմքերից մէկն է կազմում:

Պատգ. Թուճանեանի տունը հրա-
պարակին է սաղում, բայց ոչ պար-
լամենտին. նա հարց է տալիս, թէ
ինչ տւին իմպերիալիստները, ի
նչ տւին իմանալով թէ ինչ տւին:

Ես և Լիպարիտ Նազարեանը, երբ
Թուկայում բանակցում էինք. Տրօց-
կու հետ, նա մեզ ցոյց տւեց Եւրօ-
պայի ձմեռապարհը, բայց ոչ եւրօ-
պական գեմօկրատիայի, այլ իմպե-
րիալիստ կառավարութիւնների դի-
մելու խորհուրդ տւեց:

Եւրօպան փրկեց մեր սովածան ժո-
ղովրդին, դուք այդ շատ լաւ գիտէք:
Այնուհետև նոյն այդ բարեմիտ է-
սէքները վաճառի ժամին խորհուրդ
են տալիս կառավարութեանը հրա-
ժարել իշխանութիւնից. այս րոպէին
եթէ կառավարութիւնն ունի մի
պարտք, դա այն է, որ թող չտայ
նման ըննադատութիւններով պատակ-
տելու ազգի միահամուռ կամքը
(բուռն, երկարատե ծափահարութիւն):

Վ. Մինախորեան (սօց. յեղ.)— Այս-
տեղ յայտնեցին, թէ դաշնակից պե-
տութիւնները մեզ հաց են տւել. բայց
ինչ՞ով, պարոնայք, մոռանում էք, որ
այդ նոյն դաշնակիցները մեզնից ա-
բիւն են խլել: Համոզեցէք և ընդու-
նեցէք վերջապէս, որ մեր քաղաքօ-
կանութիւնը ընդմիշտ կառւած միաց
Եւրօպայի փեշից...

Վ. Նաւասարդեան (գաշ.)— Կու-
տուրայի և ոչ Եւրօպայի:

Վ. Մինախորեան (սօց. յեղ.) Այո,
մեր այդ քաղաքականութիւնը, նորից
եմ կրկնում, կորստաբեր եղել է և
կորստաբեր էլ պիտի լինի հայ ժողո-
վրդի համար: Մեզ մտահոգողը տեսալ
հանգամանքներում մեր ժողովրդի ֆի-
զիքական գոյութեան խնդիրն է մի-
այնև այս տեսակէտից կարծում ենք,
որ վերջ պիտի տալ կնճառա հաբ-
ցերը հայ-թուրքական մեթօդներով
վճռելու եղանակին և ամբողջովին
պիտի յենւել յեզափոխական Ռուսաս-
տանի վրա...

Վ. Խորենի (գաշ.)— Բայց այդպիսի
Ռուսաստան կոչ Բաբուժ արգիւր...

Ա. Երրինեան (գաշ.)— Ինչու չէ,
ապա Սուլթանօֆը թնչ է «Մուսա-

աթա-ի և շիթթիւթա-ի հետ մի-
տին (ծիծաղ):

Վ. Միխայիլովնան (սոց.-յեղ.)—
Պէտք է յենեւ յեղափոխական միու-
սաստանի վրա, եղբայրական ձեռք
մեկնել նրան, որովհետեւ այլ ձանա-
պարհ մենք ձեղ ցոյց տալ չենք կա-
րող:

Յ. Բուդաղեան (դաշ.)—Պնդում են,
պարոնայք պատգամաւորներ, թէ Ա-
դրբեյջանում խորհրդային իշխանու-
թիւն է: Ինչո՞ւ չէ. եթէ Певя Тума-
жовն-ը կարող է Լևոն Թումանեան
դառնալ, ինչու չա՞միդ Սուլթանօվը
չի կարող կոմմունիստ դառնալ (ընդ-
հանուր ծիծաղ): Մեզ խորհուրդ են
տալիս եղբայրական ձեռք մեկնել
Ռուսաստանին, բայց հետաքրքրական
է իմանալ, թէ այդ երբ է, որ մենք
թշնամական ձեռք ենք մեկնել:

Մեր մեղքը չէ այն, որ ունինք
մի սրբութիւն սրբաց՝ Անկախ Հա-
յաստանի գաղափարը (ծափեր):

Մեզ հետ չխօսեցին օտարները,
նրանք լքում են մեզ, ոչինչ, թող
լքեն, մենք ունինք մեր հարազատը՝
տաճկահայ հատւածը, որ արեւմտ
միացաւ մեզ և որի հետ միասին մենք
կարող կլինենք պաշտպանել մեր սըր-
բութիւն սրբոցը (աղմկալի ծափահա-
րութիւն):

Էսէրները խօսում են ժողովրդի ա-
պահովութեան մասին. ապա ի՞նչ է
անում կառավարութիւնը, ինչ է ա-
նում հայ ժողովրդի հարազատ դա-
ւակը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, չէ՞ որ
նրանք ապահովութեան գործն են
գործնում իրենց անդաւաշխատանք-
ներով:

Ասում են նաեւ, թէ հրաժար-
ւեցէք իշխանութիւնից, բայց մե՞
տանք երկրի դեկը, մրն է այն ոյժը,
որ պիտի հուժկու բազուկներով վարէ
մեր նաւը. կայ այդ ոյժը, պարոնայք
էսէրներ, հայ դեմօկրատիան վաղուց
հանդէս է բերել իր վճռական կամքն
ու յաղթ ոյժը, յանձինս Հ. Յ. Դաշ-
նակցութեան, որ այժմ երկրի դեկա-
վարն է ու պիտի մնայ գալիք օրե-
րին ևս (բուռն և աղմկալից ծափեր):

Վ. Մաւաւսարդեան (դաշ.)— Դի-
մում եմ ձեզ, պարոնայք պատգամա-
ւորներ, և ձեզ հետ մէկտեղ Հայաստա-
նի բազմահազար՝ բաղաձայններին.
հայրենիքը վատնողի մէջ է. չէնց այս
բողէին, երբ դուք քննութեան էք
տանում Բազի յայտագրերը, Թափում
է արեւելը հայ մարդու Դարբարդի և
Զանգեզուրի բարձունքներում: Զկայ
արդէն Բալլուշան՝ դարդը Խաչէնի
աւերել է Շոշուն՝ գոհաբը Վարան-
դայի, սրածելի են պատմական Գիւ-
լիստանի շէն ու դեղեցիկ գիւղերը
չկայ անառիկ և հեքիաթային բերդն
Անդրկովկասի իր ողջ հայկական մա-
սով՝ Շուշին, և, վերջապէս, սքանչելի
մէկ հատւածը հայ ժողովրդի, հինա-
ւուրցԱրցախի ազատասէր հայութիւն
այսօր գտնւում է Թուրք-Թաթար ևս
թաղանի տակ: Ո՛ւր է ձեր կամքը
վճռական:

Հսկայական բաղխումն է արեւել
ու արեւմուտքի. այդ բաղխման մե-
երկու գերակատարներն՝ առևտրա-
բաշխիկմի և Թիւրքիայի մասնակցու-
թիւնն ակնյայտ է, ակնյայտ է
այն, որ մեր ճակատի դերակատարը
Թիւրքիան է, Թիւրքիան, որ մեր ժո-

ղովրդի մի ամբողջ հատւածը զրեց
հողի տակ:

Մեզ խոհականութեան և համա-
կերպելու դասեր են ուղարկւում ապ-
կարծելով, թէ այդ մասին մենք ո-
չինչ չգիտենք: Ո՛չ, այդ գիտէինք
երէկ, դիտենք և այսօր: Հայ հա-
սարակական զարգացման պատմու-
թիւնն ընթացել ու գարբնել է երեք
ուժերի կողմ ազդեցութեան տակ:
Այդ ուժերից մէկը համակերպուցնե-
րի մեծաթիւ բանակն է եզել, որն
ըմբոստացման և ընդվզումի որբ-
դան իրաւունքն այլոց վերապահելով
շարունակ իր վիզն է ճկել ու շարու-
նակ սրածել. ապա դեր է կատարել
մեր կեանքում լրտեսների, կառունե-
րի, դաւաճանների ու կաշաւածների
փոքրութիւ իմբակը, որն անողոք
հալածել, հալածւում է ու պիտի
հալածւի մեր միջից և, վերջապէս,
եզել է նաեւ մի ուրիշ բանակ, որը
դարեւի դառն փորձերից եկել է այն
վերջնական և կուռ համոզման, որ
հայ ժողովրդի միակ փրկութիւնն իր
խոկ կազմակերպւած բազկի մէջ պի-
տի որոնել: Եւ այդ բաղունքն էր
միայն, որ իսլամի ուղիւնսում
իրկեց մեր փոքրիկ մակուկն ույն
ժամանակ, երբ մեզնից շատ ուժեղ
ազգեր Սիւրայի պատմութից ընդ
միշտ և անհետ հեռացան:

Բայց միթէ՞ պայքարելով մէկտեղ
նաեւ չենք բանակցել: Միթէ՞ հայ ժո-
ղովուրդն այնքան է խելացնոր, որ
զօտեմարտի մանի ամբողջ իսլամ աշ-
խարհի հետ: Մեր պայքարի ամենա-
զաժան ժամին խոկ մենք բարեկա-
մական ձեռք ենք մեկնել Թիւրքիա-

ին և պիտի մեկնենք, թէ և փորձերք
միշտ եզել են ապարդիւն և ապար-
դիւն էլ, հաւանօրէն, դեռ պիտի մը-
նան, որովհետեւ Թիւրքիայի հետ լե-
զու զանելու համար, նախ և առաջ
հզօր և յազմական բազուկ պիտի
գտնել:

Հ. Յ. Դաշնակցութիւնն այս քա-
ղաքականութիւնն է ահա ակնեցել ից
երեւոյթանայ պատմութեան ընթաց-
քում առին անգամ, երբ Հայաստանի
և հայ ժողովրդի վրա սկսել է սա-
ւառնել Թիւրքիայի ուրաւկանը:

Հայ ազատագրութեան պատմու-
թիւնից մի էլ միայն ձեզ պիտի յի-
շեցնեմ, որի հանդէպ ապագայ պատ-
մագիրը կոյր հիացմունքի խօսք ունի
տոնելու միայն. այդ ըմբոստ Զանգե-
զուրի Աղաթին Սորհրդի պատասխանն
է կողմ Բրիտանիայի ներկայացուցիչ-
ներին, երբ նրանք Բագի բրիտանա-
նական հրամանատարութեան կար-
գազութեամբ ուղւում էին զօրքեր
մտցնել Զանգեզուր:

«Մենք գիտենք, պատասխանեց
յատուկ զրութեամբ Աղաթին Սոր-
հուրդը, որ ձեր յեռնից Թիւրք բա-
նակն է գալիս Զանգեզուր, այդ պատ-
ճառով դուք միայն մեր գիտկների
վրայով կարող էք մեր երկրի սակ-
մանները կոխել. թող աշխարհը
իմանայ, որ նաեւ Անգլիայի ձեռքով
հայ ժողովրդի արեւելը հասնց, մենք
ձեզ կամազին մեր կեանքն ու հայրե-
նիքը չենք յանձնի» (ծափեր): Այս-
պէս էր Դարբարդի և Զանգեզուրի հայ
գիւղացիութեան կամքն ու վճիռն
Անգլիայի ժամանակ ու բնական է, որ
այդպէս պիտի լինի նաեւ այսօր, երբ

այդ նորամասնումն զնորդէն արդէն արդէն ինչ
 զարձած Թիւրքիան է (ծափեր): Բայց
 ամենից զաւելջողականն այն է, որ մեզ
 այսօր ուսուստեաց են անւանում:

Ինչ էին ասում մեզ Աղբբէջանն
 ու Վրաստանն ամեն օր, ամեն տեղ.
 «Հ. Յ. Դաշնակցութիւնն ուսուստէր
 է, Ռուսաստանն է ուզում բերել Ան-
 դրկովկասը, Այսօր Դաշնակցութիւ-
 նը դարձել է ուսուստեաց, իսկ Աղբբ-
 բէջանը՝ ուսուստէր...»

Զէք զգում արցնօք, որ այս ծաղր
 ու կեղծանք է պատմութեան հա-
 ցեթին:

Դուք, պարոնայք հակառակորդ-
 ներ, լաւ լոնցէք, մենք ոչ ուսուստեաց
 ենք և ոչ ուսուստէր, ոչ Թուրքաւէր ենք
 և ոչ Թուրքաւանաց. մենք սիրում ենք
 հայ ժողովուրդը կոյր և մոլի սիրով,
 ամեն զնով պիտի պաշտպանենք նրա
 գոյութիւնը և պատրաստ ենք բա-
 նակցելու ամենի եւտ, ով հաշտուում
 է հայ ժողովրդի գոյութեան և նրա
 հայրենիքի անկախութեան հետ (ծա-
 փաւորութիւն):

Տարիներ ջաղացող անութիւն էք
 արդեօք որդում գութ այսօր, երբ հայ
 ժողովրդի գոյութեան խնդիրն է գըր-
 ւած հապաղաբանի վրա. որպէսզէն ինչ
 կուզէք, բայց գիտցէք. որ Դարաբա-
 ղըն ու Զանգեզուրը հայդդէս Հայաս-
 տանի ամեն մի հատւած գիտէ իր
 բաղն այնպէս տնօրինել, ինչպէս իր
 տունը ընտղէն է հասնողում:

Մասնաձեռնի, սրբութիւնների, գա-
 ղափարների ու զաւանսնների սըր-
 բաղնութիւն է ամենուրեք. մի չէ
 «Հ. Յ. Դաշնակցութիւնը, և Նուրին,
 և Խալիլը, և Բեաղիմը, և Քեմալը և

Սուլթանօվը: Պատմութեան ճանա-
 պարին յաճախ խօսքերը ենթարկ-
 ւում են խոր էւօլիցիայի և մի բո-
 վանդակութիւնից մի բոլորովին այլ
 բովանդակութիւն ընդգրկում: Այս
 խօսքերից է մօլօթու ժողովրդի մօ-
 նակ «Красный» խօսքը. մի ժամանակ
 նաև մօլօթուք, երբ ուզում էր մէկի-
 կարմիր անւանել, այդ ածականն էր
 գործածում, բայց վաղուց է, ինչ Ու-
 կրայնայում «Дуракъ» ասելու փոխա-
 րէն «Красный» են ասում (ընդհանուր
 ծրիճաղ): Ես այսօր չգիտեմ, թէ կար-
 միր ասելով ինչ պիտի հասկանալ,
 հաստատապէս գիտեմ միայն այն, որ
 այդ խօսքի տակ պաշտպանական կօ-
 մանիւտը չի թաքնւած:

Մի քանի խօսք կուզէի ասել, մաս-
 նաւորապէս էօտերներին: Ո՞րն է ձեր
 կարծիքներից հշտարիտը, պարոնայք
 էօտերներ, այն, որ դուք արտայայ-
 տում էք դրսում, թէ այն, որ մենք
 լսում ենք այստեղ:

Ամենայնաբանի սօցիալիստ-յիզա-
 փոխականը, որի նկարը կախած է
 ձեր ֆրակցիայի սենեակում, Դաշ-
 նակցութեան մօլի հակառակորդ է
 Աթաբէկեանը, ձեր իսկ տպագրւած
 վկայութեամբ ասելէ. «Որքան էլ ժըլ-
 տական լինի, մեր վերաբերմունքը
 դէպի Դաշնակցութիւնը, որքան էլ որ
 մեծ լինեն նրա մեղքերը հայ ժողու-
 վրդի առաջ, այնուամենայնիւ, մենք
 չենք կարող չխոստովանել, որ նա
 ըզունակութիւն ունի ականջ դնե-
 լու հայ ժողովրդի զանգւածների դար-
 կերակին, իսկ հայ ժողովրդական
 զարկերակը գերադասեալէս յիշա-
 փոխական է: Եւ երբ ինքը Դաշնակ-

ցութիւնը կամենայ լինել ղեակցիօն-
 յետադիմական, հայ աշխատաւորնա-
 տները կխանգարեն զրան: Աթա-
 բէկեանը յայտնում և յայտարարում
 էր, որ Դաշնակցութիւնը «Մուսուլաթ»
 չէ, իսկ դուք այսօր դէմադրօքէն այլ
 քան էք ասում:

Դուք այժմ ինչ որ Էկաթիկին էք
 անում «հայ-թուրքական» մեթոդների
 մասին, բայց ինչու ասելի անկեղծ
 չիլեն և ասելի պարզ չիլօսել: Ան-
 շուշտ, դուք նկատի ունեք հայ-թուր-
 քական բնդհարումները, բայց չէ՞ որ
 դեռ մօտ 14 տարի առաջ, ձեր իսկ
 հասակցութեան կովկասեան ճիւղի
 ազդարարութեամբ, այդ ընդհարում-
 ների մէջ Դաշնակցութիւնը բնաւ չէր
 մեղադրւում: Վերջապէս Եբբ պի-
 տի դադարէք երեք էօտերներդ երեք
 հարծիք ունենալուց:

Եւ ինչ են ձեր այդ ճառերը, պա-
 րոնայք էսերներ. իշխանութեան էք
 ձգտում, խնդրեմ, գէտ չենք, բայց ով
 էլ ուզում է թող նստի այս օթեա-
 ւում, միայն թէ օթեակում նստե-
 լուց առաջ՝ ժողովրդի մէջ
 պէտք է նստի. մտէք ժողովրդի
 մէջ և ժողովրդի միջից միայն
 բարձրացէք դէպի իշխանութիւն:
 (ուսն ծափեր):

Բախտորոշ դէպքեր են կատարւում
 և մեր միակուռ, միակամ պայքարն
 է. որ պիտի զիմադրաւէ և փրկէ մեր
 փոթորկած նաւը:

Մեր կառավարութեանն ասելու մի
 խօսք ունինք միայն — ձեզ հետ է
 մարտնչող հայութիւնը, եղէք ասելի
 անբախտ, ասելի համոզւած, որով-

հետե այլ գիծ, բան դուք էք բնաբել,
 չկայ (երկարատե աղմկալից ծափեր):

Յ. Բուդաղեանը դաշնակցական ֆը-
 րակցիայի կողմից առաջարկում է հե-
 տեկալ բանաձեւը. «Լսելով արա-
 քին գործերի նախարարի յայտարա-
 րութիւնը Աղբբէջանի կառավարու-
 թեան վերջնադրի և նախարարի պա-
 տասխանի՝ մտօին՝ Պարլամենտը հա-
 ւանութիւն է տալիս աւած պատաս-
 խանին և կրականգում է կառավարու-
 թեան ինքնապաշտպանութեան բոլոր
 միջոցները ձեռք տանել ապակովելու
 հայ ժողովրդի ֆրիլեական գոյութիւ-
 նը և ազատ հայրենիքի անկախու-
 թիւնը»:


Բանաձեւն ընդունւում է 33 ձայ-
 նով: Նիստը փակւում է պիշերայ
 ժամը 12 ին:

Առանձին ապագրութեամբ լոյս ենք ընծայում Հայաստանի Պարլամենտի մայիսի 3-ի արտակարգ նիստի արձանագրութիւնը:

Մինչև այսօր, տարաբախտաբար, անհնար եղաւ Պարլամենտի արձանագրութեան գործը վայել հիմունքների վրա դնել և սղագրութեան արւեստը սեփականութիւն դարձնել նաև Հայաստանի Պարլամենտի:

«Յառաջ» օրաթերթից արտատուած մայիսի 3-ի նիստի արձանագրութիւնը, որ առանձին ապագրութեամբ լոյս ենք ընծայում այսօր, թերևս ամենահեռաւոր պատկերն անգամ չի տալիս այդ արտակարգ պատմական նիստի: Բայց մենք, այնուամենայնիւ, իզուր չհամարեցինք մեր աշխատանքը և նիստի համառօտ, կրճատւած և սեղմ արձանագրութիւնը որոշեցինք լայնօրէն տարածել մեր ժողովրդի մէջ:

Անգամ այսքան կրճատ կազմած արձանագրութիւնը, մեր խորին համոզմամբ, պիտի դա՛յ իւրաքանչիւր շիտակ և անկաշառ հայրենասէրի ասելու, որ, իբօք, ըստ ամենայնի ճիշտ է ըմբռնել Հայաստանի Պարլամենտը Ազրբէջանում տեղի ունեցող անցքերի բնութիւնը և Հայաստանի հանրապետական կառավարութիւնը կանգնած է եղել միակ ուղիղ և ժողովրդասէր քաղաքականութեան հողի վրա:



3551

0000360

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0000360

